

## **ՀՀ Ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/4**

**31 մարտի 2015 թ.**

Քննարկվեց քաղաքացի Հարություն Կարապետյանի 17.03.2015 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 03.02.2015 թ-ի թիվ 163 որոշման դեմ:

#### **Քաղաքացի Հարություն Կարապետյանի գանգատում բերված փաստարկները.**

Հարություն Կարապետյանը նշում է, որ իր կողմից 21.11.1997 թ-ին թիվ 95532 գործառնախցի գնվել է YА3 452 А բեռնատար ֆուրգոնը և YА3 452 Д կողավոր բեռնատարը: Այնուհետև վերականգնելով դրանք, համապատասխանաբար՝ 05.12.2010 թ-ին և 15.05.2013 թ-ին գրանցել է հաշվառման քննական բաժանմունքում:

Հարություն Կարապետյանը YА3 452 А բեռնատար ֆուրգոն ավտոմեքենան 2011 թ-ին լիազորագրով վաճառել է Ավետիք Մախյանին, որը 31.01.2014 թ-ին նշված մեքենան վաճառել է այլ անձի:

Տեղյալ չլինելով նշված ավտոմեքենայի վաճառքի վերաբերյալ Հարություն Կարապետյանը YА3 452 Д կողավոր բեռնատարը 30.04.2014 թ-ին վաճառել է:

Ելնելով վերոգրյալից՝ Հարություն Կարապետյանը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 03.02.2015 թ-ի թիվ 163 որոշումը:

#### **ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետը, քննարկելով քաղաքացի Հարություն Կարապետյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 02.02.2015 թ-ի դրությամբ նրա ԱԱՀ-ի գծով չկատարված հարկային պարտավորությունը կազմում է ընդամենը 619.800 դրամ, որից ապառք՝ 328.00 դրամ, տույժ՝ 95.000 դրամ և տուգանք՝ 196.800 դրամ: Նշված պարտավորությունը առաջացել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ կետի հիմքով հաշվարկված գումարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի կողմից 03.02.2015 թ-ին ընդունվել է թիվ 163 որոշումը՝ Հարություն Կարապետյանից 619.800 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Հարություն Կարապետյանը վերոգրյալ «YА3 452 А» և «YА3 452 Д» մակնիշի ավտոմեքենաները (այսուհետ նաև ավտոմեքենաներ) անսարք վիճակում ձեռք է բերել թիվ 95532 գործառնախցի: Մասնավորապես, համաձայն ավտոմեքենաների տեխնիկական վիճակի մասին

արձանագրությունների, դրանք 5-րդ կարգի անսարք վիճակում գտնվելու հետևանքով դուրս են գրվել թիվ 95532 զորամասի գույքի հաշվեկշռից և 21.12.1997 թ-ի ընդունման-հանձնման ակտերի համաձայն հանձնվել (օտարվել) են Հարություն Կարապետյանին, որն իր հերթին ավտոմեքենաները վերանորոգելուց հետո դրանք վաճառել է:

Այսպես, Հարություն Կարապետյանի (վաճառող) և Արսեն Մախլյանի (գնորդ) միջև 31.01.2014 թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր», որի համաձայն Հարություն Կարապետյանը Արսեն Մախլյանին է վաճառել «YA3 452 A» մակնիշի 1993 թ-ի արտադրության ավտոմեքենա: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն վաճառվող «YA3 452 A» մակնիշի ավտոմեքենան Հարություն Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանում է 05.12.2010 թ-ից:

Այնուհետև, Հարություն Կարապետյանի (վաճառող) և Դանիել Դանիելյանի (գնորդ) միջև 30.04.2014 թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր», որի համաձայն Հարություն Կարապետյանը Դանիել Դանիելյանին է վաճառել «YA3 452 D» մակնիշի 1994 թ-ի արտադրության ավտոմեքենա: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն վաճառվող «YA3 452 D» մակնիշի ավտոմեքենան Հարություն Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանում է 15.05.2013 թ-ից:

Քննարկվող դեպքում վերոգրյալ տրանսպորտային միջոցների առուվաճառքի պայմանագրերում ավտոմեքենաների առուվաճառքի վերաբերյալ արտացոլված տվյալները հիմք են հանդիսացել «YA3 452 D» մակնիշի ավտոմեքենայի վաճառքի գործարքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարում համարելու համար:

Վերոգրյալ փաստական հանգամանքների վերաբերյալ Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավանորմերի դրույթներին:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցների սեփականության, գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքները ենթակա են պետական գրանցման: Նույն հոդված 5-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող սեփականության, գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է դրա անվավերության (նման գործարքն առ ոչինչ է):

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն՝ մինչև 2010 թվականի հոկտեմբերի 16-ը պետական լիազոր մարմնի տրամադրած տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը համարվում է տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ, սակայն այդ վկայագրով գործարք իրականացնելն արգելվում է: Տրանսպորտային միջոցի սեփականատերն իրավունք ունի դիմելու և այդ հաշվառման վկայագրի հիման վրա անվճար ստանալու տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

Հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն, պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում է գույքը հանձնելու պահից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով

(հողվածի 1-ին մաս), կամ եթե գույքի նկատմամբ իրավունքը ենթակա չէ պետական գրանցման (հողվածի 2-րդ մաս), իսկ տրանսպորտային միջոցների սեփականության, գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքները ենթակա են պետական գրանցման 2010 թ-ի հոկտեմբերի 16-ից սկսած, հետևաբար մինչև 2010 թ. հոկտեմբերի 16-ը կնքված գործարքների դեպքում որպես տրանսպորտային միջոցների օտարման (պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքի ծագման) պահ պետք է համարել գործարքի կնքման օրը, իսկ 2010 թ-ի հոկտեմբերի 16-ից՝ սեփականության իրավունքի պետական գրանցման օրը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործում առկա ապացույցները վկայում են այն մասին, որ «ՄԱՅ 452 Ա» և «ՄԱՅ 452 Դ» մակնիշի ավտոմեքենաները Հարություն Կարապետյանի կողմից փաստացի ձեռք են բերվել 1997 թ-ին, հետևաբար ավտոմեքենաների օտարման (պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքի ծագման) պահը համարվում է գործարքի կնքման օրը, այն է՝ 21.12.1997 թ-ին կազմված ընդունման-հանձնման ակտերով Հարություն Կարապետյանին ավտոմեքենաների հանձնման օրը: Նման պայմաններում «ՄԱՅ 452 Դ» մակնիշի ավտոմեքենայի վաճառքի գործարքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարում չի կարող համարվել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

## ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ձեռյալ համարել ՀՀ ՖՆ էրեբունու ՀՏ պետի 03.02.2015 թ-ի թիվ 163 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝

  
  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ